ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 63

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26-ը նոյեմբերի 2022թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը, որից 3-ը ZOOM-ի միջոցով:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը: Ա. Մակարյանը նշեց, որ «ԵՊՀ ԻՄ 2017-2022թթ. գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների ներկայացում» հարցը տեղափոխվել է հաջորդ նիստ՝ զեկուցող Մ. Ճաղարյանի հիվանդ լինելու պատճառով:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2021-2022թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:

   / Զեկուցող Արտաքին կապերի բաժնի մասնագետ **Ա. Սարգսյան** /

2. ԵՊՀ ԻՄ-ի 2023թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին:

   / Զեկուցող Գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան** /

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2022թ.-ի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում):

   / Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրեն **Ա. Մակարյան** /

4. ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը հաստատելու մասին:

   /Զեկուցող ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան/**

5. **Ընթացիկ հարցեր**

   5.1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի

կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին։

/Զեկուցող Գիտական քարտուղար **Մ. Աթոյան/**

5.2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին։

/Զեկուցող Գիտական քարտուղար **Մ. Աթոյան/**

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը։

***<u>Օրակարգի առաջին</u>*՝** «ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2021-2022թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի մասնագետ **Ա. Սարգսյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ վերջին 5 տարիներին հարցումն իրականացվում է առցանց, անանուն, հարցմանը մասնակցում են մարզի գործատու կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները։ 2022 թ.-ին իրականացված հերթական ուսումնասիրության համար էլեկտրոնային հարցաթերթ ուղարկվել է 137 գործատուի, արձագանքել են ընդամենը 73-ը (53%-ը)։ Կարևոր է նշել նաև այն փաստը, որը հարցման մասնակիցների քանակը վերջին տարիներին ավելացել է, ինչը վկայում է, որ նրանք շահագրգռված են Մասնաճյուղի կրթական գործունեությամբ։ Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտաքին շահակիցների կարծիքը Մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ։

Նշվեց, որ հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են, ինչը փաստում է, որ Մասնաճյուղը կատարում է իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրները։ Նշվեց նաև, որ վերջին 3 տարիների համեմատ շահակիցների տված գնահատականների միջինը էապես չի փոփոխվել։

Օրինակ, մեր շրջանավարտների տեսական գիտելիքների իմացությանը **4 և 5 գնահատականներ** են տվել հարցմանը մասնակցած շահակիցներից 78.1%-ը, մասնագիտական պատրաստվածությանը՝ 76.7%-ը, որը մյուս որակների համեմատ բարձր ցուցանիշն է, սակայն պետք է նշել, որ մեր շրջանավարտների գործնական հմտությունների (միջին գնահատականը՝ 3.71) և մասնագիտական խոսքը (միջին գնահատականը՝ 3.87) համեմատաբար ցածր են գնահատվել մեր շահակիցների կողմից։

Գործատուների 61.7%-ը մեր շրջանավարտների քննադատական-վերլուծական կարողությունները գնահատել են 4 և 5 գնահատականներով, իսկ 65.7%-ը գտնում են, որ մեր շրջանավարտները կարողանում են արագ և ճիշտ կողմնորոշվել տարբեր գործնական իրավիճակներում. այս գնահատականները բավականին գոհացնող են։ Անձնային և մարդկային որակներին տրված միջին գնահատականները նախորդ ցուցանիշների համեմատ էապես բարձր են և գերազանցում են 4-ը (մասնավորապես, վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերի միջին գնահատականը 4.12 է, իսկ աշխատանքային պատասխանատվությանը՝ 4.13)։ Այս տարվա հարցումների արդյունքում մեր շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունների միջին գնահատականը աճել է հասնելով 4.09։ Հարցման մասնակիցների 71,2%-ը մեր շրջանավարտների ինքնազարգացման ձգտումը գնահատել է 4 և 5 գնահատականներով։ Հարցմանը մասնակիցների 86,3%-ը իրենց կազմակերպությունում Մասնաճյուղի հեղինակությունը գնահատել են 4 և 5 գնահատակններով։ Նշենք, որ այդ ցուցանիշը վերջի տարվա համեմատ աճել է ։

Այն հարցին, թե խորհուրդ կտան մեր շահակիցներն իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ, դրական է պատասխանել հարցման մասնակիցներից 67-ը (91,8%-ը), այս ցուցանիշը աճել է նախորդ տարիների համեմատ, ինչը բավականին լավ արդյունք է։

Հարցումները ցույց են տվել, որ տարածաշրջանում շատ է բնագիտական առարկաների՝ քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի ուսուցիչների, ինչպես նաև աշխարհագրության ուսուցչի պահանջը, շահակիցների կողմից մշտապես բարձրաձայնվում է նախնական զինվորական պատրաստության ուսուցիչներ

պատրաստելու հարցը, նաև ՏՏ ոլորտի ժամանակակից մասնագիտությունների իրականացումը։ Հարցումից եզրակացնում ենք, որ իրավաբանության և իրավագիտության պահանջարկը ևս բարձր է։

Ա. Սարգսյանը նշեց նաև, որ *«Խնդրում ենք նշել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների երեք ուժեղ կողմերը»* հարցի համար ստացվել են հետևյալ պատասխանները.

- Գիտելիքների բազա, սովորելու ձգտում, դիպլոմ,
- Մասնագիտական հմտությունները, արագ կողմնորոշման և նոր տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունները,
- Պատրաստվածություն, խոսքի զարգացում, թիմային աշխատանք,
- վարվեցողություն, աշխատասիրություն,ակտիվություն,
- Համարձակությունը, նոր տեխնոլոգիաներին տիրապետումը, փոփոխություններին հեշտ հարմարվելը։

«*Խնդրում ենք նշել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների երեք թույլ կողմերը*» հարցին շահակիցները նշել են գործնական հմտությունների պակաս, ինքնակատարելագործման ձգտումը, ՏՀՏ-ին տիրապետելու թույլ հմտություններ, քննադատական-վերլուծական կարողությունները, մասնագիտական գիտելիքների պակաս, հասարակական պասիվություն, թույլ զարգացած խոսք և միտք։

Ա. Սարգսյանի հաղորդումը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1 ում։**

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա.Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ.դ. պրոֆեսոր Մ. Միքայելյանը, ԿԲԴՎ բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը և այլոք։

Մասնավորապես, Ա. Մակարյանը նշեց, որ հակասություններ կան ուժեղ և թույլ կողմերի նշման մեջ, անհրաժեշտ է պարզել ինչու է այդպես, արդյոք դրանք վերաբերվում են տարբեր մասնագիտություններին, թե տարբեր մարդկանց, անհրաժեշտ է ՄԿՈԱ բաժնի հետ միասին պատրաստել հարցման անձնագրեր, որպեսզի հարցումների արդյունքները ավելի հիմնավոր լինեն։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ աշխատանքները պետք է լինեն առավել ուղղորդված, անհրաժեշտ է ձևակերպել ֆոկուս խմբեր հարցվողների հետ պատկերը առավել հստակեցնելու համար։

Մ. Միքայելյանը նշեց, որ հնարավոր չէ պրակտիկայի ժամանակ լիարժեք գործնական հմտություններ ստանալ։

Ն. Գրիգորյանը նշեց, որ կրթական ծրագրերի մշակման գործում կաշխատենք գործատուների հետ հնարավորինս գործակցել։

Առաջարկվեց արդյունքներն ուղարկել ամբիոններ և ուսումնական գործընթացի հետ կապված բոլոր ստորաբաժանումներ՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով։

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

- Ընդունել ի գիտություն

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի 2023թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ նախահաշիվը կազմվել է հաշվի առնելով կատարված ծախսերը, ներառյալ այս ամիս։ Նշվեց, որ այս տարվա բուջեն նախորդ տարվա բուջեի պես դեֆիցիտով է, սակայն հնարավոր է խնայողությունների հաշվին լավ դուրս գալ։ Նշվեց, որ դեֆիցիտը պայմանավորված է անհետաձգելի հարցերով կապված ընթացիկ ռազմավարական ծրագրի իրականացման հետ. օրինակ՝ նախատեսված է աշխատավարձների բարձրացում 10 տոկոս, որը փոքր թիվ չէ կազմում։ Այս տարի նախատեսվել է դասախոսական կազմի տեղափոխման համար ձեռք բերել նոր միկրոավտոբուս՝ եղածները հին են և հաճախակի են փչանում, ձմռանը ուղևորները մրսում են։ Ավելացել են այլ եկամուտները, այս տարի քչացել են ավանդից եկող եկամուտները (ավանդի տոկոսադրույքը փոփոխական է, այս տարի նվազել է)։ Աճել է ֆիքսված պարգևավճարների տողը։ Բակը վերանորոգելու համար նախատեսվել է 4 մլն դրամ (Նախահաշվի նախագիծը կարող եք տեսնել **հավելված 2-ում**)։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը և այլոք։

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ անհրաժեշտ է հատկացնել լրացուցիչ միջոցներ բարելավվելու ԵՊՀ ԻՄ-ի սանհանգույցների վիճակը, տեղադրելով տարբեր տեսակի սարքավորումներ, իսկ ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը համաձայնեց Մ. Օթարյանի առաջարկի հետ և առաջարկեց նախահաշվում ավելացնել այդ ծախսերը:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 63/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 11-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2023 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին համաձայն հավելված 2-ի:
2 Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2023 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվը ներկայացնել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի երրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2022թ.-ի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում)» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանի հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ 2022թ. ընդունելության արդյունքների (առկա և հեռակա ուսուցում) ցուցանիշը 40 հոգով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշին: 2022թ. ԵՊՀ ԻՄ ընդունված առաջին կուրսեցիների և ՄՄՈՒՀ-ից ԵՊՀ ԻՄ-ում ուսումնառությունը շարունակողների ընդհանուր թիվը 270 է, որից բակալավրիատի առկա ուսուցմամբ առաջին կուրսեցիների թիվը՝ 182, հեռակա ուսուցմամբ առաջին կուրսեցիների թիվը՝ 45, ՄՄՈՒՀ-ից ուսումնառությունը շարունակողների թիվը՝ 29, մագիստրատուրա (հեռակա ուսուցմամբ)

ընդունվածների թիվը՝ 14: Ա. Մակարյանը, նշեց, նաև, որ Մասնաճյուղ ընդունվածների հիմնական մասը Տավուշի մարզի բնակիչներ են:

Այնուհետև Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց, թե ինչպիսի խմբեր են ձևավորվել: (ԵՊՀ ԻՄ ուսանողական համակազմը /25.11.2022թ/ կարող եք տեսնել հավելված 3-ում):

Այնուհետև Ա. Մակարյանը շնորհակալություն հայտնեց այն աշխատակիցներին, ովքեր իրենց աշխատանքով նպաստել են Մասնաճյուղի ուսանողական համակազմի թվաքանակի աճին, և հույս հայտնեց որ աճը կպահպանվի նաև հետագայում:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- Ընդունել ի գիտություն:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը:

Ն. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի 1.2.3. «Մշակել և կրթական ծրագրերում ներդնել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմ» խնդրի իրականացման հանձնառությունից ելնելով՝ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը մշակել է շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը՝ տես **հավելված 4**: Ն. Գրիգորյանը նշեց, որ սրանք մեր բուհի կողմից խոստացվող կոմպետենցիաներն են բոլոր կրթական ծրագրերի համար և բավականաչափ ընդհանրական են: Նա նշեց, որ կոմպետենցիաները քննարկվել են կրթական ծրագրերի ղեկավարների հետ, քննարկվել է որակի ապահովման մշտական հանձնաժողովում և կան կրթական ծրագրեր, որտեղ արդեն ներդրվել են:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, և այլոք:

Մասնավորապես արտահայտվողները նշեցին, որ առաջարկվող նախագիծը բավականին երկար ժամամակ քննարկվել է ԵՊՀ ԻՄ-ում, և խմբագրումների կարիք չունի:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 63/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր:

5.1.Լսեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ սույն կարգը մշակվել է ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 ՌԾ-ի «2.2.5. Սահմանել ամենամյա մրցանակներ «Տարվա դասախոս»» գործողության հանձնառությունից ելնելով: Մ. Աթոյանը նշեց, որ սույն կարգը գրվել է ԵՊՀ համապատասխան կարգի հիման վրա, սույն մրցույթի կազմակերպման նպատակն է նպաստել դասավանդման մեթոդների կատարելագործմանը, արդի մեթոդների կիրառմանը և լավագույն փորձի տարածմանը, մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարեկան մեկ անգամ 4 անվանակարգերում, կարող են մասնակցել

ԵՊՀ ԻՄ-ում դասավանդողները, ովքեր տվյալ ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ-ում դասավանդում են առնվազն 2 մասնագիտական դասընթաց։ Մրցույթն ունի երկու բաղադրիչ՝ մրցանակակիրների ընտրություն և դասընթացների տեսաձայնագրում՝ լավագույն փորձի տարածման նպատակով։ Մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մասին տեղեկատվությունը համապատասխան հանձնաժողովը հայտարարում է մինչև ընթացիկ ուսումնական տարվա մարտի 1-ը։ Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (դիմում-հայտի ձևը հաստատվում է Հանձնաժողովի կողմից), իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետն է ընթացիկ տարվա մարտի 31-ը։ Առաջարկվող նախագիծը կարող եք տեսնել **հավելված 5-ում**։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ.դ. պրոֆեսոր Մ. Միքայելյանը, ԿԲԴՎ բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը և այլոք։

Մասնավորապես առաջարկվեց.

- Միաձև դարձնել մանսնաճյուղի բոլոր կարգերը,
- կարգերի փոփոխության կարգը դնել փաստաթղթի վերջում, որտեղ պետք է գրվի ովքեր կարող են կարգում փոփոխություններ առաջարկել,
- Մրցութային հանձնաժողովը կազմված լինի 7 հոգուց, և կազմը առաջարկվի ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից,
- 11-րդ կետում – արտահերթ նիստի մասին տեղեկացվի առնվազն 1 օր առաջ, ոչ թե 1 ժամ,
- 12-րդ կետում – հանձնաժողովի անդամների համար նախատեսել առցանց մասնակցություն,
- 12–րդ կետում – անդամները տեղեկացվեն և հեռախոսով, և հաղորդագրությամբ,
- 12 –րդ կետում - Նիստերը պետք է պարտադիր արձանագրվեն,

- 16-րդ կետում հստակեցնել «թեկնածուի ուսանողների գնահատականներ» արտահայտությունը,
- 11-րդ կետում «ոչ ուշ, քան» արտահայտությունից հետո ավելացնել «նիստից» բառը,
- 12-րդ կետում 1-ին նախադասությունից հետո ավելացնել «Անհնարության դեպքում Հանձնաժողովի անդամը (անդամները) նիստին կարող են մասնակցել հեռավար»:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը առաջարկեց, հանձնարարել գիտքարտուղարին կատարել առաջարկված փոփոխությունները և կարգը հաստատել ներկայացված փոփոխություններով հանդերձ:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 63/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5.2 Լսեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ մրցույթի նպատակն է խրախուսել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատում և

մագիստրատուրայում սովորող ուսանողների առաջադիմությունը և խթանել նրանց գիտական և հասարակական ակտիվությունը: Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի բոլոր այն ուսանողները, ովքեր սովորել են առնվազն 4 կիսամյակ և ԵՊՀ ԻՄ-ի մագիստրատուրայի բոլոր այն ուսանողները, ովքեր սովորել են առնվազն 2 կիսամյակ, կազմակերպվում և անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակում, որի համար ստեղծվում է մրցութային հանձնաժողով: Նախագիծն ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 6-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ.դ. պրոֆեսոր Մ. Միքայելյանը, ԿԲԴՎ բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ՈՒԽ նախագահ Գ. Խաչատրյանը, ՈՒԳԸ նախագաը Անի Թիրաբյանը և այլոք:

Մասնավորապես առաջարկվեց.

- 1.4 կետը՝ փոփոխությունների կարգը տանել վերջ, որպես առանձին բաժին
- 2.6. «Մրցույթի հաղթողների վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները մինչև ***մրցույթի անցկացման օրը*** հրապարակման ենթակա չեն» խմբագրել հետևյալ կերպ՝ «Մրցույթի հաղթողների վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները մինչև մրցույթի արդյունքների ներկայացման օրը հրապարակման ենթակա չեն»:
- 1.2 կետը և 3.1.-ը հակասում են իրար՝ 3.1-ում չկա մագիստրոսի վերաբերյալ մասը
- 3.3. կարծում ենք պետք է նշվի ըստ Հավելված 1-ի, ոչ թե ըստ հանձնաժողովի հաստատման, հայտի ձևը կա կարգում
- 3.6 –ա/ և բ/ կետերում - ոչ թե իրենց բնութագրերը, այլ իրենց կողմից տրված
- 4.5 միջազգային օլիմպիադաների դիպլոմ - 2 միավոր քիչ է:
- 4.6.3. Ֆակուլտետի ՈՒԽ կամ ՈՒԳԸ անդամներին, ՈՒԽ համագումարի
- պատվիրակներին, ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին տրվում է 3 միավոր:

- 4.6.5 Մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում նշանակալի հաջողությունների համար Հանձնաժողովի որոշմամբ կարող է տրվել մինչև 7 միավոր, իսկ բացառիկ դեպքերում՝ 10 միավոր։ - գրել **առանձին կետով, կամ ենթակետով**

ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհրդի կողմից առաջարկվում է 4.9.1 և 4.9.2 կետերում կատարել լրացումներ հետևյալ ձևով.

- ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը կազմակերպելու է սեմինար-քննարկում հաղթող մասնակցի և 1-ին փուլն անցած մասնակիցների հետ՝ փորձի փոխանակման նպատակով, դրանով խրախուսելով 1-ին փուլն անցած ուսանողներին, իսկ հաղթող մասնակցին ՝ հնարավորություն կտրվի տպագրել իր գիտական հոդվածը։
- ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդն առաջարկում է 1-ին փուլն անցած մասնակիցների ուսման վարձի 10% զեղչ, իսկ հաղթողին՝ 20% զեղչ։ Եթե ուսանողը սովորում է անվճար ուսուցման համակարգում ՝ 1 կիսամյակի ընթացքում ուսման վարձի զեղչված չափով ամսական կրթաթոշակ (10% և 20%-ը սիմվոլիկ թվեր են՝ ենթակա են փոփոխման)։

Այնուհետև Ա. Մակարյանը առաջարկեց կարգի հաստատումը հետաձգել հաջորդ նիստ, առկա բազմաթիվ առաջարկների պատճառով, որի ընթացքում կարգում նշված հանձնաժողովի անդամները հասցնեն ուսումնասիրեն և ներկայացնել առաջարկներ հնչեցված հարցերի վերաբերյալ։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում

- Հանձնարարել աշխատանքային խմբին վերանայել կարգը և ներկայացնել հաստատման։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ